

ՀՐԱԻԷՐ ՀԱՅ ՍԱՂԷՄԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻՑ

«Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ,
մոռացի զիս աջ իմ ...»

Սաղմոս ՃԼԶ.

Շուտով, երբ մեր մոլորակը եւս չորս պտոյտ կը տայ արեւի շուրջը, այն ժամ ի լուր աշխարհի կ'ազդարարուի Փրկչի Յննդեան, կամ քրիստոնէական քաղաքա-կրթութեան երկրորդ հազարամեակի աւարտը եւ երրորդ հազարամեակի սկիզբը:

Բարեբաստիկ այս առիթով կը կազմակերպուեն աստուածահաճոյ հանդիսութիւններ: Դէպ երկինք կ'առաքուին աղօթք, օրհներգութիւն ու սրբազան պատարագ, եւ անլռելի կը դողանքն քիւրքիւրաւոր զանգեր ծագէ ի ծագ աշխարհի: Եւ Սուրբ Քաղաք Երուսաղէմը կը լինի այս ամէնի եպիկենդրոնը: Աստղագուշակ երեք մոգերի եւ մի քանի պարզամիտ հովիւների տեղակ այստեղ կը գան միլիոնաւոր հաւատացեալ ուխտաւորներ արեւելից ու արեւմուտից, հիւսիսից եւ հարաւից, չորս ծագերից աշխարհի:

Կը գան, կը լինեն Բեթղեհէմում, Փրկչի խոնարհ մտուրում, կը քարծրանան Գողգոթա, կը խոնարհուեն Լոյս Գերեզմանին ու կը հաղորդուեն ճշմարիտ մարդասիրութեան, քարոյական տառապանքի եւ անսակարկ ինքնագոհաբերման վսեմ խորհուրդներին: Կը լինեն Եհովայի տաճարում, որին, ըստ սովորութեան, նուիրեցին Մանուկ Յիսուսին: Այստեղ նրանք կը յիշեն Սիմէոն Ծերունին, որը Աստծուց խնդրել էր մահ չտալ իրեն մինչեւ կը տեսներ Փրկչի ծնունդը, որին

հաւատում եւ սպասում էր: Ու երբ, հէնց այս տաճարում, նա գիրկն առաւ Մանուկ Յիսուսին, աչքերի գոհունակութեամբ քարծրացրեց երկինք ու գոչեց. «Տէր, արդ արձակեա զճառայս ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո»: Կը լինեն Գեթսեմանի պարտէզում, ուր երբեմն իր աշակերտների հետ եւ երբեմն մենակ առանձնանում էր Յիսուս ու խորհում, աղօթում, ուսուցանում եւ, ինչու չէ, նաեւ տրտմում-վշտանում էր. «Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ»:

Ուխտագնացներն, այդպէս, կը լինեն ուրիշ սրբավայրերում, կը յիշեն սրտայոյզ շատ դրուագներ Քրիստոսի կեանքից եւ կը նորոգեն իրենց ուխտն առ Աստուած եւ առ Միածին Որդին, որ ծնաւ, մարդացաւ եւ խաչուեց վասն մեղաց մերոց:

Այդ օրերին ամբողջ քրիստոնեայ աշխարհը աչք կտրած պիտի նայի Սուրբ Քաղաքին եւ կաթողիկ, ուղղափառ, անգլիական եւ այլ եկեղեցի, առաջին շարքում պիտի տեսնի նաեւ Հայ առաքելական եկեղեցին, քանզի նա Երուսաղէմի Սուրբ Տեղեաց հնագոյն երեք ժառանգորդներից մէկն է եւ երեքի մէջ առաջինը, որ նոր կրօնը պետական հռչակեց:

Երուսաղէմում հայկական եկեղեցիներ կառուցուել ու գործել են սկսած 'րդ դարից, բայց հայոց պատրիարքութիւնը

հաստատուել, պաշտօնապես վաւերացուել է 7րդ դարում արաբական իշխանութիւնների կողմից: Հին Երուսաղէմի գլխաւոր չորս թաղամասերից մէկը, 150 հազար ֆառակուսի մեթր տարածութեամբ, զբաղեցնում է հայոց պատրիարքութիւնը, ահա, արդէն 1600 տարիներից ի վեր:

Երուսաղէմում հարաւ-արեւմտեան մասում, Սիոն լեռան բարձունքում գտնուող այդ տարածքի վրայ դարերի ընթացքում ուխտաւոր հայ թագաւորների ու թագուհիների, իշխանների ու իշխանուհիների, հայ ազնուականների, մեծանուն հարուստների առատածննու իրատուութիւններով եւ շարքային հայ հաւատացեալների լուծանքով կառուցուել են եկեղեցիներ, սրբավայրեր, գանձատուն ու թանգարան, մատենադարան ու դպրոցներ, ուխտաւորների համար կացարաններ եւ շատ այլ շինութիւններ, որոնք պահուել եւ այսօր էլ պահոււմ են Ս. Յակոբայ Միաբանութեան յարատեւ ջանքերով:

Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը անկախ, ինքնուրոյն հոգեւոր հաստատութիւն է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարոյական ենթակայութեամբ: Միաբանութիւնը, ըստ ներքին կանոնագրութեան, իր ընդհանուր ժողովում ինքն է առաջադրում եւ ինքն է ընտրում պատրիարքին, որը հաստատուում է տեղական բարձրագոյն իշխանութեան կողմից:

Երուսաղէմի հայոց պատրիարքութեան գոյութեան 1358 տարիներից մեզ յայտնի են 88 պատրիարքների անուններ, որոնց մէջ քիչ չեն սրբակրօն հոգեւորականներ, յայտնի շինարարներ, միաբանական կեանքի նշանաւոր կազմակերպիչներ, ինչպէս նաեւ բանասէր գիտնականներ, գրողներ, որ պայծառացրել են Ս. Աթոռը եւ բարձր պահել նրա միջ-եկեղեցական հեղինակութիւնը, ինչպէս

Գ. Շղթայակիրը, Յ. Վեհապետեանը, Գ. Պարոնտէրը, Յ. Նալեանը, Ե. Դուրեանը, Թ. Գուշակեանը եւ այժմ՝ Թ. Մանուկեանը:

Վերջերս տեղի հայ մամուլում հրապարակուեց «Հրաւեր հայ Երուսաղէմի սրբավայրերէն» խորագրով սրտառուչ մի գրութիւն, որ ստորագրել էր Ամեն. Թորգոմ Պատրիարքը: Այն հիմա գրասեղանիս վրայ, աչքիս առաջ է պարտապահանքի զուսպ, վրդովուած տեսքով: Կարդացի երկրորդ ու երրորդ անգամ: Սրբազանը իրաւացի է:

Եւ իրօք, հիմա մեզանում ո՞վ է հետաքրքրուում Հայ Սաղէմի, նրա ազգապատկան սրբավայրերի, վանքի ու եկեղեցիների, չորս հազար անգին ձեռագրերի, մեծահարուստ թանգարանի, նոյն մատենադարանի, դպրոցների, տպարանի եւ առ հասարակ պատրիարքութեան բախտով: Ո՛չ ոք, բառացիօրէն ո՛չ ոք: Դեռ մեծ բախտաւորութիւն պիտի համարել այն, որ այս սուրբ ու մեծ հաստատութիւնը նիւթապէս ապահովուած է իր կալուածների եկամուտով: Բայց, գրում է Սրբազանը.

«Անմշակ հողեր ունինք. ի՞նչ մեծ բարիք եւ ապահովութիւն պիտի երաշխաւորուէր, եթէ փոխանակ օտար շինարարական ընկերութիւններու, հայ շինարարական ընկերութիւններ Երուսաղէմ գան եւ նախածեռնող դառնան հայկական հողերու օգտագործման, հիմա մանաւանդ, երբ պետութիւններ շահագրգռուած են վերականգնման ձեռնարկներով այս աշխարհամասին մէջ»:

«Սակայն» շարունակում է Սրբազանը - նիւթական այս մտահոգութիւններէն աւելի կարեւոր է ներկայութիւնը հայ շունչին, հայ Քրիստոնեայ հոգիներուն, հայ ուխտաւորներուն: Քրիստոնեայ, մովսիսական եւ իսլամ համայնքներ, աշխարհի մամէն կողմերէն, խումբերով Սուրբ Երկիր այցելութեան կու գան: Միլիոնաւոր այդ

այցելուներու համեմատութեամբ աննշան է թիւը հայ ուխտաւորին:

«Կոչ կ'ուղղենք Սուրբ Երկրէն եւ Երուսաղէմէն արտագաղթած տասնեակ հազարաւոր հայորդիներուն՝ որոնք աշխարհի մէն կողմը ցրուեցան վերջին յիսնամեակին, նաեւ բոլոր գաւակներուն՝ արտասահմանի գաղթօնախններուն եւ կամ մայր հայրենիքի մէջ հաստատուած: Յիշեցէք մեր հաւատքին ակնադիւրը հանդիսացող Քրիստոսի Ծննդեան Այրը եւ Անոր Յարութեան անտիսը յայտարարող Սուրբ Գերեզմանը եւ Սրբավայրերը, ուր հայ պաշտամունքի եւ Ս. Պատարագի ամենօրեայ մատուցումը կը կատարուին անխափան»:

Արտաքին իր գուսպ ձեւի տակ ցաւի, ակսոսանքի երանգ ու շեշտեր ունի հրաւեր-կոչը: Եւ ինչպէ՞ս կարող էր չունենալ, երբ Սրբազան Հօր խօսքը վերաբերում է Սուրբ Տեղեաց երբեմնի շէն հայ ուխտաւորին, որի թիւը օտար ուխտաւորների համեմատութեամբ աննշան է: Առանց այն էլ փոքր «ածուն» ցամաքելու չափ փոքրացել է, բայց երբե՛ք չի նուազել մեծերի եւ գերմեծերի հետ համեմատուել-չափուելու այս պարտաւորութիւնը: Խաչելութիւն դարձած պարտաւորութիւն, որի ծանր հետեւանքները ազգովին կրել ենք դար ու դարեր եւ դեռ պիտի կրենք, քանի ապրում ենք արեւի տակ: 301

թուականին մեր շահած առաջնութեան դափնեպսակի քարոյական պարտադրանքն է այս. ընդունեցիր՝ շարունակի՛ր, կառուցեցիր՝ կատարի՛ր: Կեանքի օրէնք եւ ազգային արժանապատուութեան խնդիր, որը իրաւունք չունենք չկատարելու, այսինքն՝ չընդառաջելու, Ամեն. Թորգոմ Պատրիարքի հրաւեր-կոչին:

Օ՛ն, ուրեմն սիրելի հաւատացեալներ, դէպի Քրիստոսի Ծննդեան Այրը, Սրբալոյս Գերեզմանը, դէպի Դողգոթա ու Գեթսեմանի, դէպի Հայ Սաղէմ ու հայ սրբավայրեր, ուր սպասում են մեզ հարազատի սիրով, անհամբեր կարօտով: Գնանք խումբ խումբ մեր ներկայութեամբ ոգեւորելու Միաբանութեան անձնանուէր ջանք ու զոհողութիւնները եւ մեր շնչով ջերմացնելու հայ սրբավայրերի հայակարօտ մթնոլորտը:

Գնանք, որ մենք եւս հաղորդուելով Գ. Շղթայակիր, Յ. Վեհապետեան, Ե. Դուրեան, Թ. Գուշակեան մեծանուն պատրիարքների, նշանաւոր գրող ու մտածող Վ. Թէքեանի, Յ. Օշականի, Շ. Պէրպէրեանի եւ այլոց այնտեղ թողած սուրբ յիշատակներով, նորուգունեմք եւ առաւել գորանանք մեր լոյս հաւատքի եւ հայութեան մէջ:

Գնանք եւ թող մեր ուխտը ընդունելի լինի Պատրիարք Հօր բարձր միջնորդութեամբ:

Գնա՛նք:

ՍԱՐԳԻՍ ԵԱՓՈՒՋԵԱՆ